



ՀՀ արդարադատության
նախարարություն


2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՌԱՄՅԱ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ






2021 թվականի տարեկան հաշվետվությունը թվերով






2021 թվականի տարեկան հաշվետվությունը թվերով

23 միջոցառումների կատարողականը տոկոսային հարաբերակցությամբ





2021 թվականի տարեկան հաշվետվությունը ոլորտներով





**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11 (շարունակական)

Ենթակետ 1. Փակվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում՝ Սիլիկյան թաղամասում, կառուցվել է շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ (200 մահճակալ նախատեսվել է բուժման կարիք ունեցող անձանց համար):

Ենթակետ 2. ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխվել է նախկին «էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք.

Ենթակետ 3. ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը լուծարվել և ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում կառուցվել է ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք.

Ենթակետ 4. ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը փակվել է, և դրա փոխարեն կառուցվել է 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ:

Ենթակետ 5. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ստեղծվել են մինչև 200 լրակազմ ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ:

Ենթակետ 6. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկն ապահովվել է օդափոխության համակարգով:

Ենթակետ 7. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունները զարգացվել են:



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: Ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է փակել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները (հատկանշական է, որ դիտարկվել է 2-ի փոխարեն 4 քլի փակելու տարբերակը՝ Երևանում 4 քլի-ի փոխարեն 1 քլի ունենալու նպատակով, որը կծածկի Երևանի կարիքները), որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում կկառուցվի միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկ՝ ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց:

Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք քայլեր: Մասնավորապես՝

- Միջազգային գործընկերների հետ ունեցած բանակցությունների արդյունքում Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) պատրաստակամություն է հայտնել աջակցելու նոր քրեակատարողական հիմնարկի մոդելի ընտրության, միջազգային բոլոր չափանիշների վեր հանման և դրանք հայաստանյան օրինակով տեղայնացնելու հարցում: Արդյունքում՝ արդեն իսկ կազմակերպվել է քննարկում գերմանացի փորձագետի հետ: Բացի այդ, 2022 թվականի հունվարի 17-18-ի ընթացքում տեղի է ունեցել գերմանացի փորձագետի այցը Հայաստանի Հանրապետություն: Այցի ընթացքում տեղում դիտարկվել են քրեակատարողական հիմնարկի համար նախատեսված տարածքները և դիտարկվել նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման մոդելները: 2022 թվականի ապրիլի 5-ին գերմանացի փորձագետի կողմից նախատեսվում է ևս մեկ այց ու համապատասխան քննարկում:

- Նոր քրեակատարողական հիմնարկի մոդելի ընտրության և բոլոր մանրամասների հստակեցմամբ 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ կառավարության քննարկմանը նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման նախագիծը ներկայացնելու նպատակով դիտարկվել է բանտային ոլորտի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման հնարավորությունը: Բանտային ոլորտի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման շրջանակներում դիտարկվել է բանտային ոլորտի փորձագետ, ճարտարապետ, տնտեսագետ, իրավաբան ներգրավելու տարբերակը: Ըստ այդմ՝ ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար



ՀՀ արդարադատության նախարարություն

տարածվել է խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման հայտարարությունն ու հրավերը և ներկայացվել են պայմանով գնման հայտեր: Արդեն հայտնի են հաղթող մասնակիցները, ինչը, ի թիվս այլնի, թույլ կտա ունենալ նոր քրեակատարողական հիմնարկի երկու այլընտրանքային նախագիծ, տեխնիկական նախնական գծագիր և 3D ձևաչափով նոր քրեակատարողական հիմնարկի մոդել:

- Նոր քրեակատարողական հիմնարկի տարածքի ընտրության համար որպես հիմնական տարբերակ դիտարկվում է նախկին «էրեբունի» քրեակատարողական հիմնարկի տարածքը: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պլանավորվել է ուսումնասիրել նախկին «էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և դրան հարող տարածքները՝ հնարավոր հողային խնդիրները վեր հանելու նպատակով: Ըստ այդմ՝ Երևան քաղաքի Նուբարաշենի խճուղի 2, Նուբարաշենի խճուղի 3/5 և Նուբարաշենի խճուղի 7 հասցեներում նախատեսվող մեծածավալ շինարարական աշխատանքներին ընդառաջ կառույցների տեղակայման տեղամասերում առաջացել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն իրականացնելու անհրաժեշտություն, որի ավարտական արդյունքների հենքով էլ արդեն իսկ հնարավոր կլինի վերջնականացնել տեղադիրքի ընտրությունն ու մշակել նոր «էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մոդելը, և ըստ այդմ՝ զարկ կտրվի նախագծանախահաշվային աշխատանքների կազմակերպմանը:

Հատկանշական է, որ ինժեներա-երկրաբանական հետազոտության կենսական անհրաժեշտությունը հաստատելու կամ հերքելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչները համապատասխան մասնագետների հետ այցելել են նշված տարածքները՝ կատարելով ակնադիտական զննություն: Հենվելով ակնադիտական զննության և նախկինում նշված տարածքների առնչությամբ ծագած խնդիրների վրա՝ ՀՀ արդարադատության նախարարությունը գտել է, որ անհրաժեշտ է կատարել ինժեներա-երկրաբանական հետազոտություն՝ առանց նախագծա-նախահաշվային աշխատանքների իրականացմանը սպասելու, քանի որ տեղադիրքից կախված՝ փոխվելու է մոդելն ու դրա մանրամասները:

Ըստ այդմ, մշակվել է Հողատարածքի ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացման խորհրդատվական ծառայության ձեռքբերման տեխնիկական բնութագիրը, որից հետո էլեկտրոնային եղանակով կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/4» ծածկագրով գնման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը 2022 թվականի փետրվարի 17-ին հրապարակվել է www.armeps.am կայքէջում: Գնման ընթացակարգի արդյունքով



ՀՀ արդարադատության նախարարություն

առկա է հաղթող ճանաչված մասնակից, ում հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, և ընթանում են հողատարածքի ինժեներատեխնիկական հետազոտությունների իրականացման աշխատանքները:

- Ինչ վերաբերում է հարցի ֆինանսական կողմին կամ ֆինանսավորման աղբյուրներին, հարկ է փաստել, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից դիտարկվում են գործընթացը տրամաբանական ավարտին հասցնելու մի քանի սցենարներ:

Մասնավորապես՝ նոր «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար ՀՀ պետական բյուջեից կամ գործընկեր միջազգային կառույցների կողմից անհրաժեշտ ռեսուրսների ներգրավման տարբերակներից բացի, որպես այլընտրանքային տարբերակ է դիտարկվում ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի շենք-շինությունների օգտագործման հնարավոր տարբերակը՝ կամ օտարման միջոցով, կամ պայմանով փոխանակության:

Ենթակետ 2: Ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխել նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ռազմավարական պլանավորմամբ անհրաժեշտ է փակել նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկի (ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց) կառուցման վայր ընտրվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի տարածքը:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի տեղափոխման և նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման տեղադիրքերը նախնական պլանով համընկնում են, անհրաժեշտ է նշված գործընթացները դիտարկել համակցության մեջ: Այսինքն՝ նշված երեք քրեակատարողական հիմնարկները միավորվելու են մեկ՝ նոր քրեակատարողական հիմնարկի մեջ: Նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման համար ձեռնարկված քայլերին անդրադարձ է կատարվել «Ենթակետ 1»-ում:



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Ենթակետ 3: ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին» թիվ 1755-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) կարգավորումների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը, իսկ նշված հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձինք տեղափոխվել են այլ քրեակատարողական հիմնարկներ՝ ըստ վերջիններիս մեկուսացվածության աստիճանի:

Հարկ է արձանագրել, որ, ըստ էության, Որոշմամբ ի կատար է ածվել Ռազմավարությամբ նախատեսված միջոցառման առաջին հատվածը (գործունեությունը դադարեցնում է ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը), իսկ երկրորդ հատվածը (ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայրի, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենքի կառուցումը) դեռևս իրականացված չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված Ռազմավարությամբ նախատեսված միջոցառման համար որպես վերջնաժամկետ նախատեսված է 2023 թվականը և այն, որ ընթացիկ տարում դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները բացակայել են: Ուստի, ներկա փուլում ՀՀ արդարադատության նախարարությունը դիտարկում է 2022 թվականի պետական բյուջեով հատկացվող ֆինանսական միջոցների շրջանակում ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայրի, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենքի կառուցումն իրականացնելու հնարավորության հարցը:

Ենթակետ 4: Ռազմավարությամբ հաստատված՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսված է փակել ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը և դրա փոխարեն կառուցել 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ:

Հիմքում ունենալով այն, որ 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման համար



**«Արդարադատության
նախարարություն»**

Նախագծանախահաշվային աշխատանքները նախկինում արդեն իսկ իրականացվել էին (նախագիծն արդեն առկա էր, նախատեսվում էր հիմնարկը կառուցել Խնձորեսկում)՝ 2022 թվականին պլանավորվում էր վերանայել նախագծանախահաշվային աշխատանքների արդյունքները՝ գործընթացին զարկ տալու նպատակով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ «Ազգային անվտանգության ծառայությունը «Արդարադատության նախարարությանը հայտնել է, որ «Ապետական սահմանի Սյունիքի մարզի արևելյան հատվածի պահպանության ամրապնդման նպատակով «Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի համար կառուցվում են պարետատներ և ուղեկալներ:

Հատկանշական է, որ «Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կողմից Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղում ընտրված հողատարածքներից մեկը համընկել է «Արդարադատության նախարարությանն ամրացված՝ քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման համար նախատեսված հողատարածքի հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ «Ազգային անվտանգության ծառայությունը դիմել է «Արդարադատության նախարարություն խնդրո առարկա տարածքն ամբողջությամբ (10.63 հա) «Ազգային անվտանգության ծառայությանը տրամադրելու առնչությամբ, ինչին ի պատասխան, կարևորելով «Ազգային անվտանգության ծառայության համար տարածքի նշանակությունը՝ «Սահմանների պաշտպանության ապահովման տեսանկյունից, «Արդարադատության նախարարությունն առարկություններ չի ներկայացրել: Զուգահեռաբար «Արդարադատության նախարարությունը, հիմքում ունենալով Ռազմավարության պլանը կյանքի կոչելու անհրաժեշտությունը, «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն առաջարկել է նոր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար տրամադրել այլ հողատարածք:

Ըստ այդմ, «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից այլ հողատարածքի տրամադրումից հետո «Արդարադատության նախարարության կողմից կդիտարկվի նոր «Գորիս» քրեակատարողական հիմնարկի կառուցման համար նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման հարցը՝ Ռազմավարության կետի կատարումը փուլային սկզբունքով ապահովելու նպատակով:

Ենթակետ 5: «ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում (այսուհետ նաև՝ Հիմնարկ) մինչև 200 լրակազմ ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ ստեղծելու նպատակով՝ «ԱՆ



ՀՀ արդարադատության նախարարություն

քրեակատարողական ծառայության կողմից հայտարարվել էր մրցույթ, որի արդյունքներով հաղթող ճանաչված «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2020 թվականի հուլիսի 8-ին կնքվել էր պետության կարիքների համար կապալային աշխատանքների պետական գնման պայմանագիր (ծածկագիրը՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-20/2-1):

Կնքված պայմանագրի շրջանակներում Հիմնարկի մասնաշենքերից մեկում համապատասխան լուծումների և շինարարական աշխատանքների իրականացմամբ նախատեսվել էր ապահովել կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմանները:

Ըստ այդմ՝ վերակառուցվել և հարդարվել են 48 խցեր՝ յուրաքանչյուրը 18 մետր քառակուսի բնակելի ընդհանուր մակերեսով, առանձնացված սանհանգույցով: Խցերը նախատեսված են առավելագույնը 4 անձի համար, ընդ որում՝ յուրաքանչյուր անձի համար ապահովվել է 4 մետր քառակուսուց ավելի տարածք, որի մեջ սանհանգույցը ներառված չէ:

Հարկ է նշել նաև, որ հատուկ կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պահվող անձանց համար կառուցվել և կահավորվել է առանձնացված ընդարձակ ճաշապատրաստման սենյակ և ճաշարահ, զբոսահրապարակ, թեքահարթակ, զրուցարան, տեղադրվել են նստարաններ, ինչպես նաև կատարվել է տարածքի կանաչապատում:

Հատկանշական է, որ կնքված պայմանագրի համաձայն՝ շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված էր 2020 թվականի նոյեմբերի 5-ին, սակայն Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման աշխատանքներով, իսկ հետագայում՝ նաև հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված՝ շինարարական աշխատանքների գործընթացը շեղվել էր նշանակված վերջնաժամկետից:

Այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ ձեռնարկված քայլերի արդյունքում կիսաբաց ուղղիչ հիմնարկի պահման պայմանների ապահովման աշխատանքները դեռևս 2021 թվականի փետրվար ամսին ավարտվել են: Շինարարական աշխատանքների ավարտի արդյունքում հիմնարկի 2-րդ տեղամասում շուրջ 180 ազատազրկված անձանց համար ապահովվել է կիսաբաց ուղղիչ հիմնարկի պահման պատշաճ պայմաններ:

Ենթակետ 6: ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում (աշխատակիցների սենյակներում, միջանցքներում, կալանավորված անձանց խցերում, դատապարտյալների խցերում) 2022 թվականին նախատեսվում



ՀՀ արդարադատության նախարարություն

է տեղադրել ամբողջությամբ նոր և ժամանակակից օդորակման ու օդափոխության (համատեղված ջեռուցման հետ) համակարգ, և ի կատարումն վերոնշյալ աշխատանքների 2021 թվականի հոկտեմբերի 10-ին հրապարակվել է գնման ընթացակարգ www.armeps.am կայքում, ինչպես նաև հրապարակվել է հրավեր՝ www.gnumner.am պաշտոնական կայքում:

Հայտարարված մրցույթին մասնակցել է մեկ ընկերություն՝ «ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, որն էլ ճանաչվել է հաղթող: Վերջինիս հետ կնքվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագիրը (առանց ֆինանսական միջոցների), որի ընդհանուր արժեքը կազմում է 978,000,000 ՀՀ դրամ: Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները կմեկնարկեն համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման պարագայում:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում օդափոխության համակարգի ձեռքբերումը և հետագա տեղադրումը կիրականացվի 2022 թվականին տրամադրվող ֆինանսական հատկացումների շրջանակում:

Ենթակետ 7: 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի բժշկական ստացիոնար մասնաշենքում (այսուհետ՝ Ստացիոնար) էականորեն բարելավվել են ազատազրկված անձանց պահելու և բուժանձնակազմի աշխատանքային պայմանները, մասնավորապես.

- Ստացիոնար մասնաշենքը բաժանվել է երկու ֆունկցիոնալ բաժանմունքի.
- Կահավորվել և շահագործվում են ևս 2 պրոցեդուրային և 2 բժշկի ընդունելության կաբինետներ՝ պացիենտներին առավել արագ և որակյալ բժշկական օգնություն տրամադրելու նպատակով.
- Փոխվել է Ստացիոնարի սանհանգույցը.
- Ստացիոնարի գործող ատամնաբուժական կաբինետն ապահովվել է տաք ջրով.
- Անվտանգության ապահովման նպատակով տեղադրվել է ճաղավանդակ.
- ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վարչական մասնաշենքից ստորաբաժանման դեղատունը տեղափոխվել և արդեն իսկ շահագործվում է Ստացիոնար մասնաշենքում հատուկ դեղատան համար կահավորված սենյակում, ինչը նպաստում է անհրաժեշտ բուժօգնության արագ տրամադրմանը:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 2022 թվականի ընթացքում արդեն կդիտարկվեն Ստացիոնարի



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

կարողությունների հնարավոր զարգացման այլ տարբերակներ ևս, մասնավորապես՝ Ստացիոնարում բժշկական օգնության և սպասարկման այլ լիցենզիաներ ստանալու և, ըստ այդմ, բժշկական գործունեություն ծավալելու հարցը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել են քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և, ըստ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հնարավորության, կատարվել է վերաբաշխում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովն ընդհանուր առմամբ տեղաբաշխել է 788 դատապարտյալի, ինչը նպատակ է հետապնդում ապահովել նաև քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համաչափ բաշխվածությունը:

Մասնավորապես՝ դատապարտյալները տեղաբաշխվել են հետևյալ բաշխվածությամբ.

- ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 104 դատապարտյալ, որից 2-ը՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով.
- ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 63 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ՝ 3 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ 233 դատապարտյալ, որից 1-ը՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով.
- ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ 22 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ՝ 33 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ՝ 81 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Կոչ» քրեակատարողական հիմնարկ՝ 17 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ՝ 50 դատապարտյալ, որից 5-ը՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով.



ՀՀ արդարադատության նախարարություն

- ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ՝ 74 դատապարտյալ.
- ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ 212 դատապարտյալ, որից 6-ը՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով.
- ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ՝ 19 դատապարտյալ, որից 1-ը՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ազատությունից զրկված անձանց համար վերասոցիալականացման արդյունավետ միջոցառումների կազմակերպման, արժանապատիվ պահման պայմաններ, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար՝ պատշաճ աշխատանքային կենսապայմաններ ապահովելու և միաժամանակ քրեակատարողական համակարգի միջոցներն այդ ուղղությամբ արդյունավետ և թիրախավորված բաշխելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից, ի թիվս այլնի, մեկնարկ է տրվել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման գործընթացին, ինչը ևս կնպաստի քրեակատարողական հիմնարկներում համաչափ բաշխվածության ապահովմանը:

Ըստ այդմ, ընդունվել է ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին» թիվ 1755-Ն որոշումը, որի կարգավորումների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը, իսկ դրանցում պահվող ազատությունից զրկված անձինք տեղափոխվել են այլ քրեակատարողական հիմնարկներ՝ ըստ վերջիններիս մեկուսացվածության աստիճանի:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 14

Ենթակետ 1. Իրականացվել է քրեակատարողական հիմնարկներում արդի ինժեներատեխնիկական միջոցների անհրաժեշտության կարիքների գնահատում:

Ենթակետ 2. Ձեռք են բերվել և տեղադրվել հսկողության էլեկտրոնային համակարգեր:

Ենթակետ 3. Դրանց գործարկման արդյունքում, ըստ անհրաժեշտության, վերանայվել է նաև քրեակատարողական հիմնարկների պաշտոնների անվանացանկն ու հաստիքների թիվը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացված արդի ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցների կարիքների գնահատման արդյունքներով պարզվել է, որ ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներն անհրաժեշտ է մասնակի կամ ամբողջական վերազինել անվտանգության և պահպանության ապահովման համար նախատեսված ինժեներատեխնիկական միջոցներով:

Հատկանշական է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցների կարիքների գնահատման նպատակով ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից իրականացվել է նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում առկա ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցների սարքինության ուսումնասիրություն: Ուսումնասիրված ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցների մի մասը գաղտնագրված է:

Ենթակետ 2: Քրեակատարողական հիմնարկներն արդի ինժեներատեխնիկական և անվտանգության ապահովման միջոցներով վերազինման շրջանակներում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի տեսահսկման սարքավորումածրագրային համակարգի ձեռքբերման նպատակով բաց մրցույթի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով, կազմակերպվել էր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգ, որի հայտարարությունը և



ՀՀ արդարադատության նախարարություն

հրավերը 2020 թվականի նոյեմբերի 20-ին հրապարակվել էր www.armeps.am և www.gnumner.am կայքէջերում: Նշված գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման: Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել էին 2021 թվականի հունվարի 8-ին, ժամը 11:00-ին՝ www.armeps.am կայքի միջոցով: Գնման ընթացակարգին մասնակցել էին թվով 2 կազմակերպություններ: Գնահատող հանձնաժողովը «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող մասնակից էր ճանաչել «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ին՝ 586,998,792 (հինգ հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր ինսունույթ հազար յոթ հարյուր ինսուններկու) ՀՀ դրամ գնային առաջարկով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի փետրվարի 1-ին կնքել էր տեսահսկման սարքավորումաձրագրային համակարգի ձեռքբերման պայմանագիր՝ 586,998,792 (հինգ հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր ինսունույթ հազար յոթ հարյուր ինսուններկու) ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Այս համատեքստում հարկ է նշել, որ հիմքում ունենալով ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1144-Ն որոշումը՝ 2021 թվականի հուլիսի 21-ին կնքվել է Պայմանագրի N 1 համաձայնագիրը, համաձայն որի՝ Հիմնարկում Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սահմանվել էր վերջնաժամկետ՝ 2021 թվականի դեկտեմբերի 25-ը: Այնուհետև, «Էլլիպս ՋիԷյ» ՍՊԸ-ի դիմումի համաձայն օրենքով սահմանված կարգով ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով՝ նոր ժամկետ սահմանելով 2022 թվականի հունվարի 24-ը ներառյալ: 2022 թվականի ընթացքում Հիմնարկում իրականացվում են տեխնիկական անցքերի բացման, մալուխների տեղադրման և կապուղիների անցկացման աշխատանքներ, ինչի արդյունքում ներկայումս Հիմնարկում ներդրվել է ավելի քան 400 տեսախցիկից բաղկացած ամբողջական տեսահսկման համակարգ՝ ներառված օպերատիվ կառավարման կենտրոնով: Հատկանշական է, որ «Արմավիր» քլի-ն «ծածկում է» ամբողջ հանրապետությունում ազատազրկվածների 42.3%-ը:

Ենթակետ 3: Հաստիքները լրացվել են Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում, որոնք կենտրոնական Օպերատիվ կառավարման կենտրոնում կկատարեն իրենց հսկողական գործառույթը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15

Ենթակետ 2. Մշակվել և ներդրվել է քրեակատարողական ծառայողների սոցիալական ապահովության արդյունավետ համակարգ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1) ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1321-Ն որոշման համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում է տրամադրվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության 32 ծառայողների (աշխատակիցների):

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 885-Ն որոշման շահառու դառնալուն հավակնող քրեակատարողական ծառայության 10 ծառայողների տվյալներ ուղարկվել էին ՀՀ քաղաքաշինության կոմիտե, որից վիճակահանությամբ 1 ծառայող ձեռք է բերել բնակարանի գնման իրավունք:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 2206-Ն որոշման շահառու դառնալուն հավակնող քրեակատարողական ծառայության 13 ծառայողների տվյալներ ուղարկվել էին ՀՀ քաղաքաշինության կոմիտե, որից վիճակահանությամբ 2 ծառայող ձեռք է բերել բնակարանի գնման իրավունք:

Մինևույն ժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարություն կարծիքի էր ներկայացվել «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու ու քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն



«Արդարադատության նախարարություն»

կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (սույն կետում այսուհետ՝ Նախագիծ), որը միտված էր քրեակատարողական ծառայողների բնակարանային խնդիրների լուծմանը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը նշել էր, որ հաշվի առնելով ՀՀ վարչապետի մոտ 2020թ. մայիսի 18-ին կայացած՝ Հայաստանի Հանրապետությունում 2021-2023թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման հիմքում դրվելիք հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների և կանխատեսումների մասին խորհրդակցության N Վ/84-2020 արձանագրության 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը՝ առաջարկվում է զերծ մնալ ընթացիկ ծախսերի գծով նոր նախաձեռնություններից և լրացուցիչ ծախսերի ներառումից:

Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի ընդունումը Ռազմավարական կետի պահանջ է, ինչպես նաև այն հանգամանքը, որ ինչպես նախկինում գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի, այնպես էլ ներկայում գործող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի համաձայն՝ բնակարանային ապահովության իրավունքի տեսանկյունից քրեակատարողական ծառայողը հավասարեցված է զինծառայողներին, և պետությունն իր վրա վերցրել է արդարացված բեռ՝ լուծելու քրեակատարողական ծառայողների՝ որպես զինծառայողներին հավասարեցված անձանց բնակարանային ապահովման կարիքները՝ անհրաժեշտ է լուծումներ գտնել՝ քրեակատարողական ծառայողների՝ զինծառայողներին հավասարեցումը բովանդակային և փաստացի առումով ամրապնդելու նպատակով:

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում ՀՀ արդարադատության նախարարության համար խնդրո առարկա հարցի նախընտրելի տարբերակ է դիտարկվում քրեակատարողական ծառայողների կողմից ՀՀ տարածքում բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման գործընթացի ապահովումը, որի համաձայն զինծառայողները կարող են օգտվել 20 տարի ժամկետով հիփոթեքային արտոնյալ վարկավորման ծրագրից առավելագույնը 7% տարեկան տոկոսադրույքով և պետության կողմից բնակարանի արժեքի 10% կանխավճար վճարելու, տոկոսադրույքի 3%-ի սուբսիդավորումից, իսկ անմիջապես կառուցապատողից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու դեպքում՝ նաև մնացած 4%-ի վճարումն իրականացնել օրենքով սահմանված եկամտային հարկի հետ վերադարձման միջոցով:

Ըստ այդմ, ՀՀ արդարադատությունը 2021 թվականին Նախագիծը կրկին ներկայացրել է ՀՀ ֆինանսների



ՀՀ արդարադատության նախարարություն

նախարարության կարծիքին՝ առաջարկելով դիտարկել Նախագծի կարգավորումները՝ բովանդակային ասպեկտից: Ինչ վերաբերում է խնդրո առարկա հարցի ֆինանսական կողմին, ՀՀ արդարադատության նախարարությունը պատրաստակամություն է հայտնել քննարկել Նախագծով նախատեսված բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման ժամկետները, ինչպես նաև աղբյուրները և ուղիները:

Ի պատասխան ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքն առ այն, որ Նախագծով նախատեսվող կանխավճարի ֆինանսավորման, տոկոսադրույքների սուբսիդավորման և լրացուցիչ երաշխիքների համար ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշմամբ գումարներ նախատեսված չեն, ուստի առաջարկվում է խնդրո առարկա հարցի կարգավորմանն անդրադառնալ ՀՀ 2023 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում:

Մինևույն ժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի թիվս այլնի նշել է, որ քրեակատարողական ծառայողների համար օրենսդիրը նախատեսել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 6-րդ բաժնով նախատեսված հատուցումներն ու երաշխիքներն ամբողջ ծավալով, այսինքն՝ քրեակատարողական ծառայողներն արդեն իսկ օգտվում են զինծառայողների համար առկա արտոնություններից և քրեակատարողական ծառայողների համար պետական ծառայության (ներառյալ՝ զինվորական) այլ տեսակների համեմատ տարբերակված մոտեցման կիրառումը համահունչ չէ սոցիալական արդարության սկզբունքի համատեքստում և կարող է ձևավորել չհիմնավորված սպասումներ շահառուների այլ խմբերի համար:

Վերոնշյալի համատեքստում ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկել է Նախագծով առաջարկվող կարգավորումների դիտարկումն արդեն իսկ գործող նպատակային ծրագրերի, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշման շրջանակներում:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված առաջարկությունները՝ Նախագիծը լրամշակվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշման շրջանակներում և կրկին դրվել շրջանառության մեջ:

2) 2020 թվականի ընթացքում, պայմանավորված եկամտային հարկի համահարթեցմամբ, քրեակատարողական համակարգի 2183 աշխատակցի աշխատավարձը բարձրացվել է, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման 10.1 հավելվածի համաձայն՝ տրամադրվող հավելումների հաշվին ևս 2062 քրեակատարողական



«Արդարադատության նախարարություն»

Ճառայողի աշխատավարձ բարձրացվել է միջինում 30%-ով, ինչը մեծ քայլ առաջ է քրեակատարողական հիմնարկների անձնակազմի սոցիալական երաշխիքները բարձրացնելու, թափուր հաստիքները համալրելու, կադրային արտահոսքը կանխելու, ինչպես նաև նրանց կոռուպցիոն հնարավոր դրսևորումներից զերծ պահելու համար:

Հարկ է նկատել նաև, որ օրենսդրական խնդիրների պատճառով 2014 թվականից հետո կրտսեր խմբի պաշտոններում ճառայության անցած ճառայողների ամսական դրամական բավարարումը շուրջ 40.000 ՀՀ դրամով պակաս էր մինչև 2014 թվականը միևնույն պաշտոնում ճառայող այլ ճառայողների համեմատությամբ: Հիշյալ օրենսդրական խնդիրների թիրախում հայտնվել էին առավելապես քրեակատարողական հիմնարկների պահպանության և անվտանգության ապահովման ստորաբաժանումների կրտսեր խմբերի ճառայողներ: Արդյունքում, 2018 թվականի բյուջետային մուտքերն ավելացել են շուրջ 187 մլն ՀՀ դրամով, և կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող մոտ 400 ճառայողների աշխատավարձերը միջին հաշվով 40.000 դրամ լրավճարով բարձրացվել և հավասարեցվել են միևնույն պաշտոնը զբաղեցնող մյուս ճառայողների վարձատրությանը: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկների կրտսեր խմբի ճառայողների շարունակական արտահոսքը կանխելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2018 թվականի մարտից կրտսեր խմբի ճառայողների պաշտոնային դրույքաչափերը բարձրացել են ևս 5%-ի չափով, արդյունքում՝ կրտսեր խմբի ճառայողների աշխատավարձը կազմում է ոչ պակաս, քան 130.000 ՀՀ դրամ: 2021 թվականի հոկտեմբերի 30-ի դրությամբ սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ճառայության 1984 ճառայողների (աշխատակիցների) տրամադրվել են սոցիալական փաթեթի գումարներ՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1691-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն, որ Որոշման շրջանակներում ներկայումս իրականացվում է կադրերի ընտրության (պատրաստման) և տեղաբաշխման, ինչպես նաև կադրերի առաջխաղացման մեխանիզմների ամբողջական գնահատում, ինչպես նաև 2021 թվականի նոյեմբերի 2-ին ՀՀ վարչապետի մոտ կայացած՝ ՀՀ արդարադատության նախարարության բյուջետային ծրագրերի մասին խորհրդակցության N Վ/115-2021 արձանագրությունը, որով, ի թիվս այլնի, իրականացվելու է քրեակատարողական ճառայության բարեփոխում, այդ թվում՝ Ոստիկանության պարեկային ճառայության փորձի հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ նշված գործընթացները վերջնական իրականացնելու արդյունքում միայն հնարավոր կլինի առանձնացնել քրեակատարողական ճառայության սոցիալական



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ապահովության առկա համակարգում անհրաժեշտ փոփոխությունները և, ըստ այդմ, ապահովել դրանց իմպլեմենտացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17

Ենթակետ 1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է միջին մասնագիտական «Իրավագիտություն» և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «քրեակատարողական գործ» մասնագիտության կազմակերպում:

Ենթակետ 2. Կազմակերպվում է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթություն:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2020 թվականի դեկտեմբերի 17-ին հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի «Քրեակատարողական ծառայություն դիմած և այդ ծառայությունում պաշտոնի անցնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիների (ունկնդիրների) ուսումնական դասընթաց անցնելու 2020 թվականի ծրագիրը հաստատելու, ինչպես նաև ունկնդիրների խմբի կազմը, պրակտիկայի վայրերի և դրանց ղեկավարների ցանկը հաստատելու մասին» N 532-Ա հրամանը: Նշված ակտերի հիման վրա ունկնդիրները 2021 թվականին անցել են իրականացվող պատրաստման դասընթացը: Հաշվետու ժամանակահատվածում «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանման համար պետական բյուջեից հատկացումներ չեն եղել՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակի (ապա՝ կարանտին) և ռազմական դրության հաստատմամբ: Այսինքն՝ հնարավոր չի եղել ապահովել պետական ֆինանսավորմամբ «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանումը: Ինչ վերաբերում է վճարովի հիմունքներով «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանմանը, նման ձևաչափով դիմորդներ չեն եղել: Առաջիկա տարվա ընթացքում կշարունակվեն քայլեր ձեռնարկվել պետական բյուջեից ֆինանսական և (կամ) ներդրումային հատկացումների ներգրավմամբ ոչ միայն աշխատանքային փորձ չունեցող, այլև քրեակատարողական բոլոր ծառայողների պատրաստման գործընթացը հնարավորինս օպտիմալ ձևաչափով կազմակերպելու ուղղությամբ: Նույն տրամաբանությամբ իրականացվելու է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթությունը:



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18

Ենթակետ 4. E-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը համակցվել է այլ գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն մշակելու, ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների համապարփակ վերլուծությունն ապահովելու, ինչպես նաև հսկողության գործուն միջոցներ ներդնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մանրամասն նախագծվել, մշակվել, ներդրվել և արդեն իսկ գործարկվել է «Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստրը»՝ «E-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգը (այսուհետ նաև՝ Համակարգ), որը **2021 թվականի օգոստոսի 1-ից ամբողջությամբ շահագործվում է բոլոր քրեակատարողական հիմնարկների և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության համապատասխան ստորաբաժանումների կողմից:**

Հարկ է նշել, որ համակարգի շահագործման նպատակով 2021 թվականի մայիսի 21-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի կողմից տրվել է N 3-Լ հրամանը, որով սահմանված ժամանակացույցի համաձայն՝ իրականացվում է նաև քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց անձնական գործերի մուտքը համակարգ (դրանց թվայնացումը):

Համակարգը համակցվել է **Բնակչության պետական ռեգիստրի հետ:**

Հատկանշական է, որ **Համակարգի և Բնակչության պետական ռեգիստրի հետ փոխկապակցման արդյունքում գործնականում ի հայտ եկած խնդիրները (շտկվել են անձանց որոնման հետ կապված խնդիրները, մուտքագրման համար սահմանվել են նվազագույն չափորոշիչներ, հնարավորություն է տրվել Համակարգ մուտքագրել նաև օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր հաշվառված չեն Բնակչության պետական ռեգիստրում) վերացվել են:**



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Զուգահեռաբար ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում էլեկտրոնային կառավարման համանման համակարգի՝ «E-probation»-ի մշակման և ներդրման աշխատանքները: Հետագայում նախատեսվում է «E-penitentiary» և «E-probation» էլեկտրոնային կառավարման համակարգերի համակցումը:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Համակարգ մուտքագրվել է շուրջ 1550 անձնական գործ:

Բացի այդ, 2022 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից որպես խորհրդատու նախատեսվում է ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի փորձով բիզնես վերլուծաբանի (IT Business Analyst), ով, ի թիվս այլնի, կիրականացնի Համակարգի բիզնես գործընթացների գույքագրումը և կմշակի Համակարգի արդիականացման տեխնիկական առաջադրանքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21

Ենթակետ 1. Ազատությունից զրկված անչափահասներն իրացնում են կրթություն ստանալու իրավունքը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 2-ից մեկնարկել է ազատագրված ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված մինչ 19 տարեկան անձանց հանրակրթության կազմակերպման գործընթացը:

Հատկանշական է, որ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիրը (այսուհետ՝ հանրակրթական ծրագիր) ներկայումս իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում: Հանրակրթական ծրագիրը նախկինում իրականացվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում: Հանրակրթական ծրագիրը շարունակական է և իրականացվում է առ այսօր: Ներկայումս հանրակրթական ծրագրին մասնակցում է 8 աշակերտ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է ընդգծել, որ 2019 թվականից երաշխավորված է ազատությունից զրկված անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22

Ենթակետ 2. Ազատությունից զրկված անձանց կարիքների գնահատման հիման վրա մշակվել են մասնագիտական կրթության նոր ծրագրեր կամ փոփոխվել են արդեն իսկ առկա ծրագրերը.

Ենթակետ 3. Սահմանվել են վերստուգելի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան ստուգել կրթական ծրագրերի արդյունավետության աստիճանը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ենթակետ 2: Նշված կետի 1-ին ենթակետի շրջանակներում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (այսուհետ՝ ՊՈԱԿ) համատեղ մշակվել է ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթական կարիքի գնահատման մեթոդաբանությունն ու գործիքակազմը: Մեթոդաբանության համաձայն՝ ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթական կարիքների գնահատումներն իրականացվելու են յուրաքանչյուր տարվա ավարտին: Ազատությունից զրկված անձանց կարիքների գնահատման հիման վրա ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվել են հետևյալ փոփոխությունները.

1) 2020 թվականին Ծրագրում ներառված «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու/անգլերեն/ռուսերեն», «Բիզնես գրագիտություն», «Համակարգչային հմտություններ» և «Դեկորատիվ կիրառական արվեստ /խեցեգործություն, մանրանկարչություն, բատիկա, զարդակիրառական արվեստ/» դասընթացներից բացի 2021 թվականի Ծրագրում ներառվել են նաև «Վեբ Դիզայն», «Հայագիտություն և մշակույթ» և «Վարսավիրական հմտություններ» դասընթացները: Վերջինս իրականացվելու է միայն ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում և Պրոբացիայի ծառայությունում:



**«Արդարադատության
նախարարություն»**

2) Միևնույն ժամանակ, հիմքում ունենալով նաև Հավելվածի 29-րդ կետի պահանջը (ընտանիքում բռնության գործադրման համար դատապարտված անձանց հետ վերականգնողական աշխատանքների իրականացումը)՝ 2021 թվականի Ծրագրում ներառվել է «Ընտանեկան բռնության կանխարգելում /հույզերի կառավարում/» դասընթացը՝ հաշվի անելով նախորդ տարվա ընթացքում մասնակցության բարձր ցուցանիշը:

Ենթակետ 3: «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Կենտրոնի կողմից իրականացվում է Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որն ուղղված է քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և պատժից ազատվելուն նախապատրաստվող անձանց, ինչպես նաև պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման և ներգրավմանը ուսումնական ու դաստիարակչական գործընթացներին՝ նպաստելով կրկնահանցագործությունների նվազմանը: Ծրագիրն իրականացվում է կամավոր մասնակցության հիմունքներով, ինչպես նաև դատական ակտի հիման վրա վերասոցիալականացման պարտադիր ծրագրի մասնակցության հիմունքներով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ինչպես կրթական դասընթացների և հմտությունների ուսուցում՝ «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու/ռուսերեն, անգլերեն», «Հայագիտություն և մշակույթ», «Բիզնես գրագիտություն», «Վարսավիրական հմտություններ», «Համակարգչային հմտություններ», «Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում», այնպես էլ գեղագիտական կրթություն՝ «Դեկորատիվ կիրառական արվեստ/խեցեգերծություն, զծանկար, զծագրություն, կոլաժ, վիտրաժ» դասընթացը: Դասընթացներն իրականացվում են դասախոսությունների և գործնական պարապմունքների եղանակով: Դասախոսությունները ներառում են թեմայի շրջանակում տեսական և հիմնարար գիտելիքների տրամադրում մասնակիցներին, որոնք նպաստում են անձի զարգացմանն ու աճին: Գործնական պարապմունքներն անձի գործնական հմտությունների զարգացման ու անձնական աճին ուղղված ինտերակտիվ ուսուցումն է, ինչպես նաև մասնակիցների անհատական գեղարվեստական աշխատանքների պատրաստումը և ցուցադրությունը, ուսումնական կամ փաստավավերագրական ֆիլմերի ցուցադրումը և ինտերակտիվ ուսուցման այլ եղանակների կիրառումը:



**«Արդարադատության
նախարարություն»**

- Ծրագրի ազդեցությունը չափելու նպատակով մշակվել և փորձարկվել են վերստուգելի չափորոշիչներ, որոնք ուղղված են մասնակիցների մոտ կրթական, գեղագիտական և անձնային փոփոխությունների հստակ չափելիությունը ստուգելու՝ ներառելով յուրաքանչյուր դասընթացի առարկայական գիտելիքների գնահատման և մանկավարժահոգեբանական գնահատման հստակ մեթոդաբանություն: Հաշվի առնելով այն, որ Ծրագիրը հանդիսանում է անձի մոտ հիմնարար գիտելիքների տրամադրման և վերասոցիալականացմանն ուղղված միջոցառում՝ վերստուգելի չափորոշիչների մեթոդաբանությունը մշակվել է 2 ուղղությամբ՝ յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ գիտելիքների ստուգման, ինչպես նաև անձի վարքային և անձնային հատկանիշների փոփոխության գնահատման:
 - Դասընթացների մասնակիցների մոտ գիտելիքների ստուգման հիմնական գործիքակազմը հետևյալն է.
 1. Առարկայական գիտելիքների ստուգման թեստեր (կիրառվում է բոլոր առարկաների դեպքում),
 2. Ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ (կիրառվում է Դեկորատիվ կիրառական արվեստ առարկայի դեպքում),
 3. Ցուցահանդեսների մասնակցություն ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների միջոցով (կիրառվում է Դեկորատիվ կիրառական արվեստ առարկայի դեպքում),
 4. Բաց դասերին, թեմատիկ միջոցառումներին, քննարկումներին մասնակցություն (կիրառվում է բոլոր առարկաների դեպքում):
 - Ի լրումն առարկայական գիտելիքների գնահատման՝ իրականացվում է նաև անձի վարքագծի, հուզական վիճակների, անձնային հատկանիշների, արժեհամակարգի գնահատում՝ գիտականորեն հաստատված մեթոդիկաների միջոցով: Մասնակիցների մոտ Ծրագրի ազդեցությունը վարքային և անձնային մակարդակում գնահատման նպատակով նախատեսվել են հետևյալ մեթոդիկաները՝
 1. Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ախտորոշման մեթոդիկա (Ըստ Կ. Թոմասի),
 2. Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշման թեստ,
 3. Լյուշերի գունային ընտրության մեթոդիկա,
 4. Ռ. Լազարուսի քոփինգ ստրատեգիաների թեստ,



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

5. MMPI mini անձնային բազմագործոն հարցարան:

Գնահատման գործընթացը Ծրագրի յուրաքանչյուր մասնակցի հետ իրականացվում է դասընթացների սկզբում, ընթացքում և ավարտին:

Վերը նշված չափորոշիչները փորձարկման նպատակով Ծրագրի՝ 2021 թվականի մեկնարկից հետո (փետրվարի 18-ից մինչև ապրիլի 20-ը) իրականացվել է դասընթացների նախագնահատում ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան», «Սևան», «Նուբարաշեն», «Կոշ» քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության շուրջ 103 մասնակցի շրջանում: Նախատեսվել է նաև իրականացնել դասընթացի հետգնահատում՝ յուրաքանչյուր մասնակցի մոտ դասընթացի ազդեցության՝ փոփոխությունների և առաջընթացի համեմատական պատկերը ստանալու նպատակով: Նախագնահատումը և հետգնահատումը հնարավորություն կընձեռեն նաև ունենալ Ծրագրի ազդեցության միասնական պատկերը:

Բացի այդ, հարկ է նկատել, որ իրականացվում է մասնակիցների հաճախումների գրանցում՝ համաձայն նախապես կազմված և հաստատված դասացուցակի, ինչպես նաև նախատեսվել է իրականացնել ընթացիկ գնահատումներ՝ մասնակիցների մոտ դասընթացների ընթացիկ ազդեցությունը և հարցերի վերհանման նպատակով, որն էլ կապահովի մասնակիցների նկատմամբ անհատական մոտեցումը:

Այսպիսով, գնահատման հստակ չափորոշիչների միջոցով հնարավոր կլինի իրականացնել համապարփակ գնահատում՝ մասնակիցների մոտ Ծրագրի ազդեցության և նրանց վերասոցիալականացմանը նպաստելու ուղղությամբ, ինչն էլ կապահովի նաև Ծրագրի շարունակական զարգացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25

Ենթակետ 2. Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից ընդլայնվել է ազատազրկված անձանց մասնագիտական կրթական ծրագրերի շահառուների շրջանակները՝ այդպիսով հնարավորինս ապահովելով ազատությունից զրկված անձանց ոչ ֆորմալ կրթության կազմակերպումը:

Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ «Իրավախախտում կատարած անձանց 2021 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության ուսումնական ծրագրի (մոդուլ) դասախոսությունների ու գործնական պարապմունքների ցանկերը հաստատելու մասին» N 22-Ա հրամանով հաստատված ծրագրով ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան», «Արմավիր», «Սևան», «Կոշ», «Նուբարաշեն» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում և ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում իրականացվում են հետևյալ դասընթացները՝ «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու/անգլերեն/ռուսերեն», «Բիզնես գրագիտություն», «Համակարգչային հմտություններ», «Դեկորատիվ կիրառական արվեստ/խեցեգործություն, գծանկար, գծագրություն, մանրանկարչություն, կոլաժ, վիտրաժ/», «Հայագիտություն և մշակույթ», «Վարսավիրական հմտություններ» և «Ընտանեկան բռնության կանխարգելում /հույզերի կառավարում/»:

Որոշումից բխող միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) ջանքերով քննարկվել և առաջ են քաշվել մի շարք թիրախային նախաձեռնություններ՝ կապված ազատազրկման ձևով պատիժ կրող անձանց զբաղվածության ապահովման, ինչպես նաև վերջիններիս մասնագիտական (արհեստագործական) հմտություններ ուսուցանելու արդյունավետության բարձրացման հետ, որի արդյունքում՝ բոլոր քրեակատարողական հիմնարկներում իրականացվել է կարիքի գնահատում: Ըստ այդմ, նշված նախաձեռնությանն արձագանքել է շուրջ 300 դատապարտյալ: Կազմակերպվելիք ուսումնառության ծրագրերին մասնակցելու ցանկություն հայտնած



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

անձանց թվաքանակը և մասնագիտացումը ներկայացվում են ստորև.

- 1) «Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում»- 110,
- 2) «Այգեգործություն և ջերմոցային տնտեսություն»- 87,
- 3) «Կահույքագործություն»- 69,
- 4) «Շինարարական հմտություններ»- 45,
- 5) «Հացթուխի մասնագիտացում»- 41,
- 6) «Դերձակի մասնագիտացում» -23,
- 7) «Կոսմետոլոգիա մասնագիտացում» - 17:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ առաջիկայում կդիտարկվեն կարիքի գնահատման հիման վրա մասնագիտական նոր կրթական ծրագրերի հնարավոր ձևաչափերը և ֆինանսական հնարավոր հատկացումները՝ գործընթացը կենսագործելու նպատակով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27

Ենթակետ 2. Ազատությունից զրկված անձանց (դատապարտյալների և /կամ կալանավորված անձանց) համար իրականացվում է հանրակրթություն՝ անկախ տարիքից:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), Նախագծերի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև ֆինանսական գնահատականը: Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մշակել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» լայնածավալ բարեփոխումներ նախատեսող օրենքի նախագիծ, որն Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2022 թվականի փետրվարի 9-ին: Նոր կարգավորմամբ նախատեսվել է դրույթ, համաձայն որի՝ մասնագիտացված և հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն հանրակրթական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև բժշկական հաստատություններում երկարատև բուժում ստացող կամ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց համար հանրակրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեությունը և դրանց առանձնահատկությունները սահմանվում են օրենքով, դրանց կանոնադրություններով և իրավական այլ ակտերով: Նշված կարգավորումը թույլ կտա սահմանել համապատասխան առանձնահատկություններ քրեակատարողական հիմնարկներում կրթության իրավունքի պատշաճ իրացման առումով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» նախագծով առաջարկվում է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի և «Կրթության բնագավառում խտրականության դեմ» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով ապահովել քրեակատարողական հիմնարկներում ազատագրվման ձևով պատիժ կրող և/կամ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

կալանավորված անձանց (արդեն 19-ը տարին լրացած) կրթության իրավունքի իրացման իրական հնարավորությունը, ինչպես նաև հանրակրթության պատշաճ՝ արդյունավետ և որակով իրականացման համար լուծել առկա կազմակերպահրավական խնդիրները:

Շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքներն ամփոփվել են և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 28

Միջոցառում՝ Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա մշակվել է սոցիալական-իրավական հարցերով աջակցության տրամադրման ծրագիր:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Նշված կետի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (այսուհետ՝ ՊՈԱԿ) ուսումնասիրվել է ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների շրջանում սոցիալական-իրավական հարցերով աջակցություն տրամադրելու միջազգային փորձը: Հիմքում ունենալով ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև արդի մարտահրավերներով պայմանավորված՝ ՊՈԱԿ-ի կողմից «Աջակցություն նախկին ազատազրկվածներին՝ դիմակայելու COVID-19 համավարակի ռիսկերին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակվել, համակարգվել և իրականացվել է ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների սոցիալ-հոգեբանական, իրավական խորհրդատվության և հումանիտար օգնության տրամադրման ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի շրջանակներում՝

- 1) ապահովվել է պատժի լրիվ կրումով և պայմանական վաղաժամկետ ազատվող 200 անձանց իրազեկվածությունը համավարակների (մասնավորապես՝ կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) և սոցիալական ծառայությունների վերաբերյալ (և պետական, և հասարակական),
- 2) 94 շահառուի տրամադրվել են հումանիտար աջակցության փաթեթներ,
- 3) ապահովվել է պայմանական վաղաժամկետ ազատված պրոբացիայի շահառուների հասարակության մեջ ինտեգրմանը նպաստումը՝ իրականացնելով շարունակական սուպերվիզիա,
- 4) ապահովվել են շահառուների՝ սոցիալական ծառայություններից օգտվելու, պետական, հասարակական կառույցներին դիմելու և աջակցության առկա ծառայություններից օգտվելու հմտությունները,
- 5) 15 աշխատակիցներ կայուն աջակցություն և մասնագիտական վերահսկողություն են ստացել կրթական և



**«Արդարադատության
նախարարություն»**

սոցիալականացման ծրագրերում ներգրավված 20 անձանց հետ կապված դեպքերի առնչությամբ, ինչպես նաև 20 բարդ և դիսկալյին դեպքերի հետ կապված աշխատանքներն իրականացնելու նպատակով,
6) 29 պրոբացիայի ծառայողների մոտ ձևավորվել և ամրապնդվել են շահառուների սոցիալական ինտեգրացիայի բարձրացմանն ուղղված՝ առցանց ծրագրերից օգտվելու գիտելիքները և հմտությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31 (շարունակական)

Ենթակետ 1. Քրեակատարողական հիմնարկներում ապահովվել են հաշմանդամություն ունեցող ազատությունից զրկված անձանց համար մատչելի պայմաններ (թեքահարթակներ, բազրիքներ, համապատասխան սանհանգույցներ և այլն) և համապատասխան հարմարանքներ (տեսողության, լսողության և խոսքի խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ):

Ենթակետ 2. Ապահովվել է հաշմանդամություն ունեցող դատապարտյալների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունը, մասնագիտական խնամքը:

Ենթակետ 3. Քրեակատարողական ծառայողները հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու համար վերապատրաստվել են:

Ենթակետ 4. Քրեակատարողական հիմնարկներն ապահովված են Բրայլյան տառատեսակի գրքերով, ձայնային գրքերով, սուրդոթարգմանության տեսանյութերով և այլ տեղեկատվական նյութերով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: «Արդարադատության նախարարության կողմից ներկայացված՝ «ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող ազատությունից զրկված անձանց համար մատչելի պայմաններ (թեքահարթակներ, բազրիքներ, համապատասխան սանհանգույցներ և այլն) և համապատասխան հարմարանքներ (տեսողության, լսողության և խոսքի խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ) ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման հայտը «Կառավարության կողմից



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

բավարարվել է և ներառվել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում:

Միևնույն ժամանակ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի միջավայր և պայմաններ ստեղծելու նպատակով վերջին տարիներին իրականացված վերանորոգման և շինարարական աշխատանքների արդյունքում ներկայումս ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների առնվազն 1 սանհանգույցում տեղադրված է զուգարանակոնք, իսկ ՀՀ ԱՆ «Հրազդան» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում հատուկ պայմաններ են ստեղծվել նաև լոգարանում՝ ապահովելով համապատասխան հարմարություններ:

Հարկ է նշել նաև, որ 2021 թվականի փետրվար ամսին շահագործման հանձնված ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց ուղղիչ հիմնարկում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար զբոսաբակում կառուցվել է թեքահարթակ:

Ենթակետ 2: Ի լրումն 1-ին ենթակետով նշվածի և անդրադառնալով ազատությունից զրկված՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական խնամքին՝ հարկ է նշել, որ նշված անձանց մասնագիտական խնամքը ներկայումս ապահովվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների աշխատակիցների միջոցով:

Հաշմանդամություն ունեցող ազատագրված անձանց համար բարելավվել է առողջապահական ծառայությունների հասանելիությունը, մասնավորապես՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ստորաբաժանման բոլոր մասնաշենքերում արդեն իսկ գործում են հասանելի բժշկական ծառայություն ապահովող կահավորված բուժմասեր՝ մշտապես մասնաշենքում գտնվող բժշկական անձնակազմով (բժիշկ, բուժքույր), ինչը հանգեցրել է հաշմանդամություն ունեցող ազատագրված անձանց առանց ազատագրված անձի տեղաշարժի դժվարացման և մասնաշենքի տարածքից դուրս գալու բժշկական օգնության տրամադրմանը:

Որոշ՝ ծայրահեղ դեպքերում խնամքն իրականացվում է նաև ազատությունից զրկված այլ անձանց՝ խցակիցների կողմից. վերջիններիս հետ քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական



ՀՀ արդարադատության նախարարություն

աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար անցկացվում են համապատասխան խորհրդատվություններ:

Ենթակետ 3: «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից քրեակատարողական ծառայողների համար նախատեսված ամենամյա պարտադիր վերապատրաստումների ծրագրում ներառվել է «Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները» թեման, որին մասնակցել են թվով 550 քրեակատարողական ծառայողներ:

Դասընթացի նպատակն է եղել զարգացնել քրեակատարողական ծառայողների գիտելիքները խոցելի խմբերի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) հետ տարվող աշխատանքներում առանձնահատուկ վարվելակերպի վերաբերյալ, նպաստել քրեակատարողական ծառայողների մոտ խոցելի խմբերի նկատմամբ զգայուն մոտեցումների ձևավորմանը, ձևավորել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ վարվելակերպի նոր հմտություններ: Բացի այդ, դասընթացի շրջանակում ներկայացվել է հաշմանդամություն ունենալու հանգամանքը՝ մարդու իրավունքների համատեքստում, քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման համար տարբեր ծառայությունների մատչելիության ապահովման հարցերը: Միևնույն ժամանակ, ներկայացվել են հաշմանդամության տեսակները, հաշմանդամության տրամադրման կարգը և պայմանները:

Ենթակետ 4: ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար «Բրայլյան» տառատեսակի գրքեր, ծայնային գրքեր, սուրդոթարգմանության տեսանյութեր, ինչպես նաև այլ տեղեկատվական նյութեր ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման հայտը ՀՀ կառավարության կողմից բավարարվել է և ներառվել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում:

Միևնույն ժամանակ, 2021 թվականի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվել են 103 հաշմանդամություն ունեցող անձինք (1-ին խմբի՝ 2 անձ, 2-րդ խմբի՝ 16 անձ, 3-րդ խմբի՝ 85 անձ):



ՀՀ արդարադատության
նախարարություն

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 32 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել են ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված առկա օրենսդրական կարգավորումները և, ըստ անհրաժեշտության, մշակվել է իրավական ակտի նախագիծ:

Ենթակետ 2. Գործնականում ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու, իրավունքահեն մոտեցում (right-based approach) դրսևորելու նպատակով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը վերապատրաստվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 1: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 513-Լ հրամանի ընդունմամբ զարկ տրվեց ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնավնասման և ինքնասպանության կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների առավել համակարգային իրականացմանը:

Նշված ռազմավարության շրջանակներում ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող, մասնավորապես՝ ինքնասպանության և ինքնավնասման հակում ունեցող անձանց իրավունքների երաշխավորման տեսակետից կատարվել են օրենսդրության վերլուծություններ՝ վեր հանելու համար օրենսդրական բացերը և խնդրահարույց կարգավորումները: Այս համատեքստում հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 440-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի



«Արդարադատության նախարարություն»

«Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 279-Ն հրամանի N 1 հավելվածում, որով բացառվել է ինքնավնասման հակում ունեցող անձանց որպես բացասական հակում ունեցող հաշվառումը, և ըստ այդմ՝ ապահովվել է ինքնավնասման և ինքնասպանության հակում ունեցող անձանց պիտակավորման փոխարեն նրանց հետ արդյունավետ վերականգնողական աշխատանքների իրականացման հնարավորությունը:

Այս առումով ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Եվրոպայի Խորհրդի աջակցությամբ մշակվել են նաև քրեակատարողական հիմնարկներում ինքնավնասումների ու ինքնասպանությունների ռիսկի վերհանման և գնահատման գործիքները, որոնք փորձարկվել են ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում: Փորձարկման արդյունքների հիման վրա գործիքներում արդեն իսկ կատարվել են որոշ փոփոխություններ: Ներկայումս Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպվում են վերապատրաստումներ՝ գործիքների կիրառումը հետագայում բոլոր հիմնարկներում ապահովելու նպատակով: Վերապատրաստումների մեկնարկին դրանց մասնակցել է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, քրեակատարողական հիմնարկների և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար անձնակազմը: Վերապատրաստումների ընթացքում ևս գործիքներն ամփոփելուց, ինչպես նաև բոլոր հիմնարկներում դրանց կիրառման համար պատրաստված անձնակազմ ունենալուց հետո գործիքները կհաստատվեն և ամբողջությամբ կներդրվեն:

Բացի այդ, կարևորելով մենախցում առանձնացնելու վերաբերյալ, ազատությունից զրկված անչափահաս անձանց պատժախուց տեղափոխելու վերաբերյալ և այլ կարգավորումները վերանայող՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում և հարակից ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի փաթեթով կարգավորման առարկա հանդիսացող հարաբերությունները և հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց իրավունքների առավելագույնս երաշխավորման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է քննարկում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի,



ՀՀ արդարադատության նախարարություն

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում բարձրացված հիմնախնդիրների և առաջարկված լուծումների համատեքստում օրենքների նախագծերը լրամշակվել են, արդեն իսկ ներկայացվել են ՀՀ ազգային ժողով: Նախագծերի ընդունման դեպքում դրանց հիման վրա համապատասխանաբար կլրամշակվեն նաև հարակից ենթաօրենսդրական ակտերի նախագծերը:

Ենթակետ 2: Ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների իրացումը գործնականում ապահովելու նպատակով՝ հիմքում ունենալով նաև իրավունքահեն մոտեցում (right-based approach) դրսևորելու անհրաժեշտությունը՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (սույն ենթակետում այսուհետ՝ Կենտրոն) կողմից հետևողականորեն իրականացվում է քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների ծրագիրը, որը ենթարկվում է ամենամյա վերանայումների:

Կենտրոնի կողմից 2021 թվականի ընթացքում նշված ծրագրով 550 քրեակատարողական ծառայող վերապատրաստում է անցել, ի թիվս այլնի, հետևյալ թեմաներով՝ «Քրեակատարողական համակարգում իրավախախտ անչափահասների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները», «Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում պահվող 65 տարին լրացած (ծեր) դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում ապաստան հայցողների բացահայտումը և նրանց ուղղորդումը դեպի ապաստանի ընթացակարգ», «Կյանքի իրավունք», «Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի միջազգային չափանիշները»:

Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ Կենտրոնի կողմից քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների իրականացումը կրում է շարունակական բնույթ՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Նախադրյալներ իրավունքահեն մոտեցումն ամրապնդելու և պարբերաբար կատարելագործելու համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33

Ենթակետ 2. Ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պատշաճ իրացման նպատակով ուսումնասիրվել են քրեակատարողական հիմնարկներ տրանսպորտային հասանելիության խնդիրները, ապահովվել է տրանսպորտային հաղորդակցությունը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացված տեղեկատվության հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել է ուսումնասիրություն ՀՀ ԱՆ քրեակատարողական բոլոր հիմնարկների տրանսպորտային հասանելիության վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Հրազդան», «Վանաձոր», «Գորիս» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում հանրային տրանսպորտի հասանելիության խնդիր որպես այդպիսին առկա չէ, մասնավորապես՝ հանրային տրանսպորտի կանգառների (այդ թվում՝ նաև միջմարզային, ներքաղաքային և ներհամայնքային) հեռավորությունը վերոնշյալ քրեակատարողական հիմնարկների տեղակայման վայրից չի գերազանցում 250 մետրը, իսկ ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի տեղակայման վայրից ամենահեռու կանգառը՝ Երևան-Աբովյան միջքաղաքային 261 համարի ավտոբուսի կանգառը, գտնվում է շուրջ 400 մետր հեռավորության վրա, իսկ Աբովյան-Գեղաշեն միջհամայնքային տրանսպորտի կանգառը՝ շուրջ 50 մետր հեռավորության վրա:

Հանրային տրանսպորտի հասանելիության խնդրի լուծման առաջնահերթություն առկա է միայն ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում:

Հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի անարգել իրացման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը 2021 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 01/12.0.03/39579-2021 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական



ՀՀ արդարադատության նախարարություն

հիմնարկների հանրային տրանսպորտի հասանելիության հարցի կարգավորման գործընթացի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով, ինչին ի պատասխան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 2021 թվականի դեկտեմբեր 20-ի թիվ ԳՍ//32932-2021 գրությամբ հայտնել է, որ վերջինս դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան քաղաքի նոր երթուղային ցանցի շրջանակներում ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների հարևանությամբ կանգառի կետեր նախատեսելու համար:

Բացի այդ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը ստանալուց հետո խնդրո առարկա հարցի կարգավորման արդյունքների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացնի ՀՀ արդարադատության նախարարությունը: Ըստ այդմ, ստացվել է ՀՀ քաղաքապետարանի դիրքորոշումն առ այն, որ Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում ներգրավված միկրոավտոբուսների սահմանափակ քանակի պատճառով նոր երթուղի կազմակերպելու կամ գործող երթուղիներից որևէ մեկի ուղեգիծը մինչև նշված հիմնարկներ երկարացնելու հնարավորություն ներկայումս առկա չէ:

Զուգահեռաբար Երևանի քաղաքապետարանը նշել է, որ Երևանի հանրային տրանսպորտի բարեփոխումների գործընթացի շրջանակներում մայրաքաղաք են ներկրվել (գործընթացը շարունակում է կրել շարունակական բնույթ) նոր, միջին դասի քաղաքային ավտոբուսներ, որոնց շահագործման աշխատանքները կազմակերպական փուլում են և նշված գործընթացի շրջանակներում կդիտարկվեն խնդրո առարկա հարցի լուծման վերաբերյալ ներկայացված առաջարկները:

Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական հիմնարկների հանրային տրանսպորտի հասանելիության հարցի կարգավորմանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ խնդրո առարկա հարցը քննարկվում է համապատասխան մարզերի միասնական երթուղային ցանցերի շրջանակներում: Ներկայումս համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում վերանայվում են միջմարզային և ներմարզային երթուղիների ուղեգծերը, որոնցում կնախատեսվեն վերը նշված քրեակատարողական հիմնարկներին հնարավորինս մոտ համապատասխան կանգառներ:

Ձեռնարկված քայլերը կրելու են շարունակական բնույթ:



ՀՀ արդարադատության
նախարարություն

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34 (շարունակական)

Ենթակետ 3. Անհրաժեշտ և բավարար պայմաններ են ստեղծվել որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման համար (շենքային պայմանների բարելավում, որակյալ կադրերի և սարքավորումների ապահովում):

Ենթակետ 5. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմը պարբերաբար վերապատրաստվում է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ենթակետ 3: Ազատագրված անձանց որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման շարունակականությունն ապահովելու նպատակով՝ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից որդեգրվել և դինամիկ իրականացվում է բժշկական անձնակազմի՝ որակյալ մասնագիտական կադրերով համալրելու գործընթացը: Վերջինս, ի թիվս այլնի, ներառում է ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների համալրումն, ինչպես նոր մասնագիտական որակավորում ունեցող որակյալ բժիշկ-մասնագետներով և բուժքույրերով, այնպես էլ ամբողջ բուժանձնակազմի համար պարբերաբար իրականացվող վերապատրաստումներով:

2021 թվականի ընթացքում մասնագիտական որակի չափանիշներին չբավարարելու հիմքով՝ աշխատանքային պայմանագրերի ավարտից հետո ՊՈԱԿ-ի 33 աշխատակից (17 բժիշկ, 14 բուժքույր/բուժակ և վարչակազմի 2 աշխատակից) ազատվել են աշխատանքից: Միաժամանակ, աշխատանքի են ընդունվել մասնագիտական բարձր որակավորում ունեցող 38 աշխատակից (17 բժիշկ, 16 բուժքույր/բուժակ, վարչակազմի 5 աշխատակից), ինչը հնարավորություն է տվել ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում ապահովել 24/7 ռեժիմով որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը:

Այսպիսով, կադրային բարեփոխումների արդյունքում հաշվետու տարվա ընթացքում շուրջ 20%-ով փոփոխվել է ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմը՝ համալրվելով որակյալ և մոտիվացված կադրերով:

Հատկանշական է, որ ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ



**«Արդարադատության
նախարարություն»**

իրականացվող Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում ծրագրի շրջանակներում, ի թիվս այլնի, 2021 թվականի ընթացքում իրականացվել է կարիքների գնահատում: Կարիքների գնահատման հիման վրա ցուցակագրվել են այն սարքավորումները, որոնցով անհրաժեշտ է համալրել ՊՈԱԿ-ի՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված ստորաբաժանումները: Գնահատման արդյունքներով նախատեսվում է բանտային բժշկության ոլորտում ներդնել ազատագրված անձանց համար բժշկական տվյալների գաղտնիության ապահովմամբ, բնակչության շրջանում մատուցվող բժշկական խորհրդատվությունների ծավալին և որակին համապատասխանող, միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան հեռաբժշկության մոդելը, ինչը, ի թիվս այլնի, թույլ կտա նվազեցնել ազատությունից զրկված անձանց մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձգձգման ռիսկը, մյուս կողմից լրացնել տեղում մասնագետների հնարավոր պակասը:

Հեռաբժշկության հիմնական խնդիրներն են՝

- 1) պացիենտների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդիականացումը.
- 2) նեղ մասնագիտական խորհրդատվություն պահանջող հիվանդությունների ժամանակին ախտորոշման և բուժման արդյունավետության բարձրացումը.
- 3) ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների միջև համագործակցության արդյունավետության բարձրացումը:

Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի կողմից հեռաբժշկության մոդելի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների (այդ թվում՝ բժշկական), ինչպես նաև ծրագրային ապահովման (նախատեսվում է ՊՈԱԿ-ի համար ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և այն կցել հանրային առողջապահական համակարգին) ձեռք բերման նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքներով առկա է հաղթող ճանաչված մասնակից:

Հեռաբժշկության մոդելը՝ բանտային բժշկության ոլորտում ներդնելու նպատակով իրականացվող աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի սեպտեմբեր ամիսը:

Ենթակետ 5: 2021 թվականի ընթացքում «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) միջին և ավագ բուժանձնակազմն անցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումներ:

Մասնավորապես՝ «Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի



**«Արդարադատության
նախարարություն»**

քրեակատարողական հիմնարկներում ծրագրի շրջանակներում ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմի շուրջ 71 ներկայացուցիչ անցել է վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով.

- «Քրեակատարողական հիմնարկներում պացիենտների խնամքին վերաբերող նեղ ոլորտային հարցեր».
- «Վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ բժշկական զննության արձանագրման և իրավասու մարմիններին իրազեկման ընթացակարգեր» թեմայով.
- «Բժշկական միջամտություններով պայմանավորված՝ սանիտարահամաճարակային և հիգիենիկ հսկողության մեխանիզմներ».
- ««HELP» հեռավար դասընթացի շրջանակներում՝ Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեի (ԽԿԿ) չափանիշների ուսումնասիրություն».
- «Քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատման գործիքակազմի պիլոտավորում» թեմայով:

Բացի այդ, ՊՈԱԿ-ի ողջ բժշկական անձնակազմն Ակադեմիկոս Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ անցել է վերապատրաստման դասընթացներ հետևյալ թեմաներով.

- «Հաղորդակցում պացիենտների հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին».
- «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ծանր և ծայրահեղ ծանր պացիենտների վարումը հիվանդանոցային պայմաններում».
- «Պատվաստանյութերի կիրառման հրահանգները»:

ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմի համար կազմակերպվող վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

Կատարված է

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Կատարված է մասնակի
Կատարված չէ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40 (շարունակական)

Ենթակետ 4. Իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի՝ ինքնավնասման վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ ուսուցում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 513-Լ որոշման համատեքստում Եվրոպայի Խորհրդի աջակցությամբ մշակվել են քրեակատարողական հիմնարկներում ինքնավնասումների ու ինքնասպանությունների ռիսկի վերհանման և գնահատման գործիքները, որոնք փորձարկվել են ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում:

Գործիքակազմի կիրառմամբ ակնկալվում է վեր հանել անձի կողմից ինքնասպանություն կամ ինքնավնասում կատարելու ռիսկերը անմիջապես քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուց հետո: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս որևէ ռիսկի առկայության դեպքում իրականացնել առավել խորքային գնահատում: Հաշվի առնելով ստացված տվյալները՝ անձի հետ անհատական աշխատանքները կկատարվեն առավել թիրախավորված և արդյունավետ, և հնարավոր կլինի անձին ժամանակին պատշաճ օգնություն ցույց տալ՝ կանխարգելելով հնարավոր ինքնավնասումը կամ ինքնասպանությունը:

Նշված գործիքակազմի փորձարկման շրջանակներում Եվրոպայի Խորհրդի տեղական փորձագետի մասնակցությամբ արդեն իսկ Գործիքակազմի կիրառումն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ (կես օր տևողությամբ՝ 18 աշխատակցի մասնակցությամբ, և 4 օր տևողությամբ՝ 17 աշխատակցի մասնակցությամբ), և պարբերաբար տրամադրվել են մեթոդական խորհուրդներ՝ ինքնավնասման նախանշանները պատշաճ արձանագրելու և հայտնաբերված ռիսկին պատշաճ արձագանքելու վերաբերյալ:



**«Արդարադատության
նախարարություն»**

Ներկայումս Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպվում են վերապատրաստումներ՝ գործիքների կիրառումը հետագայում բոլոր հիմնարկներում ապահովելու նպատակով: Վերապատրաստումների մեկնարկին դրանց մասնակցել է «ԱՆ քրեակատարողական ծառայության, քրեակատարողական հիմնարկների և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար անձնակազմը:

Վերոգրյալի համատեքստում հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ նշված միջոցառումը շարունակական բնույթի է՝ Գործիքակազմի ամբողջական ներդրմանը զուգահեռ կիրականացվի դրա հետ առնչվող ամբողջ անձնակազմի վերապատրաստում՝ ապահովելու ազատությունից զրկված անձանց մոտ ինքնավնասում կատարելու ռիսկի ժամանակին հայտնաբերումը և այդ կապակցությամբ պատշաճ միջոցների ձեռնարկումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42 (շարունակական)

Ենթակետ 3. Իրականացվել է հոգեբանների մասնագիտական վերապատրաստում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկների հոգեբանները վերապատրաստվել են Եվրոպայի Խորհրդի աջակցությամբ մշակված՝ քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության գննության, ռիսկի գնահատման և ինքնավնասումների ու ինքնասպանությունների ռիսկի վերհանման և գնահատման գործիքների փորձարկման շրջանակներում՝ դրանց պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով: Նշված գործիքների շրջանակներում ներկայումս վերապատրաստումները կրկին իրականացվում են՝ բոլոր հիմնարկների հոգեբաններին պատրաստելու նպատակով: Հարկ է նշել նաև, որ 2021 թվականին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հոգեբան մասնագետները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր հոգեբանի, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում աշխատող հոգեբանների մասնակցությամբ, ըստ նախապես ուսումնասիրված և վերջիններիս կողմից բարձրացված մասնագիտական կարիքների, իրականացրել են համապատասխան հինգ դասընթաց:

Բացի այդ, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) կողմից քրեակատարողական համակարգի հոգեբանների համար իրականացվել է կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից դրսևորվող սուիցիդալ վարքագծի վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման առցանց դասընթաց:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների հոգեբանների աշխատանքային գործիքների միատեսակությունը և միասնականությունը ապահովելու նպատակով նախատեսվում է մշակել և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներին տրամադրել ազատությունից զրկված անձանց անձնային առանձնահատկությունները, հոգեվիճակը, իմացական ոլորտը բացահայտող մեթոդիկաների, անչափահասների և չափահասների համար նախատեսված խմբային հոգեբանական աշխատանք իրականացնելու մոդուլային ծրագրերի, ինչպես նաև քրեակատարողական



**«Արդարադատության
նախարարություն»**

հիմնարկում աշխատող հոգեբանների աշխատանքի էթիկական նորմերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկներ, որոնց կապակցությամբ նաև նախատեսվում են վերապատրաստումներ իրականացնել համապատասխան աշխատակիցների շրջանում:

Այդպիսով, ազատությունից զրկված անձանց տրամադրվող հոգեբանական ծառայության որակի բարձրացման համատեքստում հոգեբանների մասնագիտական վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 44

Ենթակետ 1. Համատեղ վերապատրաստումներ անցկացնելու համար իրականացվել է մեթոդական ձեռնարկների մշակում:

Ենթակետ 2. Իրականացվել են քրեակատարողական ծառայողների և պրոբացիայի ծառայողների համատեղ վերապատրաստումներ՝ ոլորտային թեմաներով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ենթակետ 1: «ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների արդյունավետ համագործակցության շրջանակներում համապատասխան մեխանիզմներ ապահովելու համար թիրախային մի շարք հարցերի վերաբերյալ պարբերաբար կազմակերպվում են համատեղ քննարկումներ: Ըստ այդմ՝ քրեակատարողական և պրոբացիայի ծառայողներին տրամադրվում է մեթոդական աջակցություն: Ավելին՝ երկու ծառայությունների միջև համագործակցությունն ապահովելու նպատակով իրականացվել է համատեղ վերապատրաստում, որը պետք է կրի շարունակական բնույթ:

Անդրադառնալով մեթոդական ձեռնարկի մշակմանը՝ հարկ է փաստել, որ մշակվել է ««Արդարադատության գործնական ձեռնարկ» գործնական ուղեցույցը, որում շոշափվել են նաև քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների փոխգործակցությանն առնչվող հարցեր:

Հաշվի առնելով այն, որ քննարկման փուլում են գտնվում «Արդարադատության գործնական ձեռնարկ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որոնց շրջանակներում քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների գործունեության ուղղությունները կրել են էական փոփոխություններ՝ նշված նախագծերի ընդունումից հետո կդիտարկվի քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների համագործակցությանն առնչվող հարցերով առանձին մեթոդական ուղեցույց մշակելու նպատակահարմարության հարցը:



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Ենթակետ 2: 2021 թվականի հուլիսի 2-ին և հուլիսի 19-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների արդյունավետ համագործակցության մեխանիզմների ներդրման շրջանակներում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում տեղի են ունեցել համատեղ վերապատրաստման դասընթացներ: Նշված դասընթացների կազմակերպումը միտված է ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև համագործակցության փիլիսոփայության ձևավորմանը:

Հարկ է նշել, որ 2021 թվականի հուլիսի 2-ին կայացած վերապատրաստման դասընթացը վերաբերել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման թեմային, իսկ հուլիսի 19-ին կայացած վերապատրաստման դասընթացը՝ «Դատապարտյալների կարիքների գնահատում» թեմային: Վերապատրաստման դասընթացների ընթացքում վեր են հանվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման ընթացքում ի հայտ եկող խնդիրները, ներկայացվել են դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, ինչպես նաև ընդհանուր տեղեկություն է փոխանցվել կատարվող միջոցառումների և ծրագրերի վերաբերյալ: Վերապատրաստման դասընթացներն իրականացվել են հիբրիդ՝ լսարանային և առցանց եղանակով: Միաժամանակ, ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև համագործակցության ամրապնդման ուղղությամբ իրականացվող վերապատրաստման դասընթացները կրելու են շարունակական բնույթ: Ըստ այդմ, պարբերաբար իրականացվում է մոնիթորինգ՝ համապատասխան թեմաները թիրախավորելու և ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայողներին վերապատրաստելու:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

Կատարված է

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 48 (շարունակական)

Ենթակետ 2. Պրոբացիայի ծառայությունը վերազինվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Միջազգային, պետական և հասարակական կառույցների հետ համագործակցության շրջանակներում «Արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայությունը (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) վերազինվել է համակարգչային անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և համալրվել բավարար չափով գրասենյակային կահույքով:

Ներկայումս Պրոբացիայի ծառայության բոլոր նստավայրերը հագեցված են անհրաժեշտ գույքով, համակարգիչներով և համակարգչային տեխնիկայով: Հարկ է նշել, որ Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի տասը աշխատասենյակ վերանորոգվել և համալրվել է նոր կահույքով:

Բացի այդ, «Հայաստանում պրոբացիայի ծառայություն մատուցող հաստատությունների պայմանների բարելավում» ծրագրի շրջանակում «Եվրասիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը, ՀՀ-ում Լեհաստանի Հանրապետության դեսպանատան աջակցությամբ, իրականացրել է վերանորոգման և վերակառուցման ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), որը ֆինանսավորվել է Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից: Ծրագրի ընթացքում կապիտալ վերանորոգվել են Պրոբացիայի ծառայության Աբովյանի և Աշտարակի գրասենյակները, ստեղծվել են վերականգնողական ծրագրերի տարածքներ, ինչպես նաև պրոբացիայի շահառուների հետ անհատական հոգեբանական աշխատանքների համար նախատեսված առանձին սենյակ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական).

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 50

Ենթակետ 1. Մշակվել և իրականացվել է e-probation համակարգի ծրագրային ապահովումը:

Ենթակետ 2. Փորձարկվել է e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը:

Ենթակետ 3. Փորձարկման արդյունքների հիման վրա կատարելագործվել և արդիականացվել է e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը:

Ենթակետ 4. Ձեռք են բերվել e-probation էլեկտրոնային կառավարման համակարգը ամբողջական գործարկման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները:

Ենթակետ 5. E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը համակցվել է այլ գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ:

Ենթակետ 6. E-probation էլեկտրոնային կառավարման համակարգի օգտագործման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման նպատակով պրոբացիայի ծառայողները վերապատրաստվել են:

Ենթակետ 7. E-probation էլեկտրոնային կառավարման համակարգն ամբողջությամբ գործարկվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԵՆԹԱԿԵՏԵՐ 1-7 ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) էլեկտրոնային կառավարման համակարգի (այսուհետ՝ e-probation) մշակման և ներդրման հարցերի վերաբերյալ իրականացվել է գնահատման առաքելություն:

Ծրագրի շրջանակներում մի շարք հանդիպումներ են կազմակերպվել շահագրգիռ մարմինների՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների, ՀՀ ոստիկանության, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև «Էլեկտրոնային կառավարման



«Արդարադատության նախարարություն»

ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հարկ է նշել նաև, որ e-probation համակարգին առնչվող հարցեր քննարկելու նպատակով Ծրագրի շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ՝ միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ:

Հաշվի առնելով այն, որ նոր կորոնավիրուսային վարակի պատճառով Ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների 6-ամսյա պլանը փոփոխվել է՝ գնահատման հիման վրա կազմվող զեկույցը (այսուհետ՝ Ձեկույց) մշակվել է նախատեսված ժամկետից ուշ:

Հատկանշական է, որ մինչ գնահատման արդյունքներով մրցույթի հայտարարումը, մի շարք հարցեր պարզաբանելու նպատակով, քննարկում է կազմակերպվել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքներով վերջիններս Ձեկույցի վերաբերյալ ներկայացրել են իրենց առաջարկություններն ու դիտողությունները:

Հարկ է արձանագրել, որ ազգային փորձագետի կողմից մշակվել են տեխնիկական բնութագրերը, և մշակված փաստաթղթերը կարծիքի են ներկայացվել շահագրգիռ մարմիններին, այդ թվում՝ Թվայնացման խորհրդին: Կարծիքներն ամփոփվել են, և 2021 թվականի նոյեմբերի 5-ին հայտարարվել է մրցույթ՝ Համակարգի թվայնացումն իրականացնելու նպատակով: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի հետ 2022 թվականի մարտի 16-ին կնքվել է պայմանագիր: Ներկայումս ընթանում են համապատասխան աշխատանքներ՝ ծրագրակազմի մշակման ուղղությամբ:

Համակարգի ներդրումը երաշխիքներ է ստեղծելու ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու արդյունքում ճշգրիտ վերլուծական աշխատանքներ իրականացնելու, ինչն էլ ապահովվելու է ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության առավել արդյունավետ գործունեությունը, շահառուների վերասոցիալականացմանն ուղղված համալիր և նպատակային միջոցառումների շարունակական իրականացումը, հանցանք կատարած անձանց հասարակություն վերաինտեգրելուն ուղղված քաղաքականության կատարելագործումը և կրկնահանցագործության նվազեցումը: Համակարգի ամբողջությամբ նախատեսվում է գործարկել մինչև 2022 թվականի ավարտը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Կատարված է



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

Կատարված է մեծ մասամբ
ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ
Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 51 (շարունակական)

Ենթակետ 1. Մշակել և իրականացնել էլեկտրոնային հսկողության համակարգի կիրառման ծրագրային ապահովումը.

Ենթակետ 2. Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումն ապահովելու նպատակով պրոբացիայի ծառայողների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ.

Ենթակետ 3. Իրականացնել էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառումը խթանող ծրագրեր, վերապատրաստումներ դատավորների, դատախազների, փաստաբանների համար.

Ենթակետ 4. Գործարկել էլեկտրոնային հսկողության համակարգը՝ ըստ փուլերի:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԵՆԹԱԿԵՏ 1, 2 և 3:

2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՕ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Իրավունք և արդարադատություն» վերտառությամբ 5-րդ բաժնի «Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումներ» վերտառությամբ 5.6-րդ գլխում ամրագրվել է, որ Կառավարությունը պետք է շարունակի քայլեր ձեռնարկել պրոբացիայի ինստիտուտի զարգացման և կատարելագործման ուղղությամբ: Արդեն իսկ ընդունված Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերի հենքով իրավական համակարգում ներդրված՝ ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությունը զինվելու է էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով և ենթակառուցվածքներով:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի անցումային դրույթների համաձայն՝ **տնային կալանք և վարչական հսկողություն** խափանման միջոցներն ուժի մեջ են մտնելու 2023 թվականի հունվարի 1-ից:



«Արդարադատության նախարարություն»

Այլ կերպ՝ թե՛ ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, թե՛ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը նախատեսում են Կառավարության ծրագրի նշված կետի կատարմանն ուղղված կարգավորումներ:

Մասնավորապես.

Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը: Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

- 1) ունենալ նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, օգտվել հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց, կամ
- 2) շփում ունենալ որոշակի անձանց հետ, կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

Վարչական հսկողությունը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում: Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

- 1) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխելու մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը.
- 2) այցելելու որոշման մեջ նշված որոշակի վայրեր.
- 3) հաղորդակցվելու որոշակի անձանց հետ.
- 4) օրվա որոշակի ժամերին լքելու իր բնակության տարածքը, սակայն ոչ ավել, քան 12 ժամը:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակ, որը **ազատության սահմանափակումն է**: Այս պատժատեսակը դատապարտյալին, առանց հասարակությունից մեկուսացնելու, տնային պայմաններում հսկողության տակ պահելու հետ կապված այլընտրանքային պատիժ է, որը կարող է կիրառվել օրենքով նախատեսված որոշակի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվող անձանց հստակ սահմանված շրջանակի նկատմամբ:

Թե՛ նշված խափանման միջոցները, թե՛ նշված նոր պատժատեսակը օբյեկտիվորեն հնարավոր է կիրառել էլեկտրոնային հսկողության միջոցների օգնությամբ, որոնք անձը կարող է կրել կամ ձեռքին, կամ ոտքին:

Հարկ է ընդգծել, որ էլեկտրոնային հսկողության ներդնումը պայմանավորված է ինչպես վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորմամբ, այնպես էլ պետության կողմից ֆինանսական



«Արդարադատության նախարարություն»

համապատասխան միջոցների տնտեսմամբ: Այս առումով հարկ է արձանագրել, որ ներկայում պետությունն ազատությունից զրկված մեկ անձին քրեակատարողական հիմնարկում պահելու համար ծախսում է շուրջ 13.000 ՀՀ դրամ, իսկ էլեկտրոնային հսկողության միջոցների փաստացի կիրառմամբ պետության բյուջեում կարճանագրվի ծախսերի նվազում՝ հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային հսկողությունն ապահովող կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները (1 էլ. միջոցը 2000-3000 դրամի սահմաններում է եղել) գրեթե 4 անգամ պակաս են քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված մեկ անձի պահման համար պետության ծախսած միջոցներից:

Հատկանշական է, որ օրենսդրական հիմքերի նախատեսմանը զուգահեռ՝ «Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականին (շարունակվել են 2022 թվականին) ակտիվ քայլեր են իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցների ձեռքբերման ուղղությամբ.

- Ապահովվել է ֆինանսական միջոցների անհրաժեշտ հատկացումը.
 - Քննարկումներ են իրականացվել էլեկտրոնային հսկողության միջոցներ արտադրող տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ՝ դիտարկելու նշված միջոցների տեխնիկական բնութագրերը, դրանք պիլոտային կարգով կիրառելու հնարավորությունները.
 - Թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան ընկերությունները պիլոտային տարբերակով փորձարկել են իրենց արտադրանքը «Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում, կազմակերպվել են աշխատաժողովներ.
 - Մասնագիտացված կազմակերպություններից ստացված տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև «Արդարադատության նախարարության կողմից վեր հանված կարիքների հաշվառմամբ մշակվել է էլեկտրոնային հսկողության միջոցների տեխնիկական առաջադրանքը՝ հաշվի առնելով այն, որ նշված միջոցները ձեռք են բերվելու մրցութային կարգով:
 - Մշակված տեխնիկական առաջադրանքի հենքով 2021 թվականին հայտարարվել է մրցույթ, որի արդյունքներով 2021 թվականին հաղթող մասնակից չի ճանաչվել, այնուհետև 2022 թվականին հայտարարվել է երկրորդ մրցույթը, որի արդյունքներով առկա է հաղթող ճանաչված մասնակից:
- Հարկ է արձանագրել, որ գնման հայտով նախատեսվում է ձեռք բերել էլեկտրոնային հսկողության համակարգ, որը բաղկացած է.



**«Արդարադատության
նախարարություն»**

- Էլեկտրոնային հսկողության շղթայից (200 միավոր),
- Ներտնային վերահսկման սարքից (150 միավոր),
- Կառավարման ծրագրային համակարգից,
- Սերվերային համալիրից:

Բացի այդ, գնման հայտում ամրագրված է, որ հաղթող ընկերությունը պարտավորվում է իրականացնել աշխատակիցների վերապատրաստում՝ համակարգը շահագործման հանձնելու վավերագրի ստորագրման պահի դրությամբ: Ըստ այդմ, էլեկտրոնային հսկողության միջոցները մրցութային կարգով ունենալու պայմաններում կկազմակերպվեն լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ, որոնք հնարավորություն կտան պրոբացիայի ծառայողներին ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ:

Հաշվի առնելով այն, որ ռազմավարական միջոցառումը նախատեսված է իրականացնել 2021-2023թթ.-ի համար՝ հարկ է փաստել, որ ձեռնարկված քայլերի արդյունքում 2023 թվականին իրատեսական կլինի ապահովել ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կատարումը էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ:

Ենթակետ 3: «Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի համագործակցության շրջանակներում 2021 թվականի հունիս ամսին հայտարարվել է մրցույթ «Քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի արդյունավետ կիրառումն ապահովելու համար գիտագործնական մեկնաբանություններ մշակելու և պրակտիկ աշխատողներին, այդ թվում՝ դատավորներին, դատախազներին, փաստաբաններին վերապատրաստելու համար: Ըստ այդ, ձևավորվել է երկու աշխատանքային խումբ՝ խնդրո առարկա մեկնաբանությունները մշակելու համար: Բացի այդ, կանցկացվեն համապատասխան վերապատրաստումներ՝ թիրախավորելով նաև էլեկտրոնային հսկողության ինստիտուտը:

Ենթակետ

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական)

Կատարված է



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ

Կատարված է մասնակի

Կատարված չէ



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 55

Ենթակետ 1. Մշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցի հիմքում դրվող հանգամանքների գնահատման էլեկտրոնային գործիք:

Ենթակետ 2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցի հիմքում դրվող հանգամանքների գնահատման էլեկտրոնային գործիքը փորձարկվել է:

Ենթակետ 3. Փորձարկման հիման վրա գործիքը կատարելագործվել է և ամբողջությամբ գործարկվում է Պրոբացիայի ծառայությունում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության՝ Որոշմամբ նախատեսված համապատասխան գործիքակազմերը մշակվում են ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի շրջանակներում տրամադրվող փորձագիտական աջակցության շնորհիվ: Մասնավորապես՝ մշակվել է պրոբացիայի չափահաս և անչափահաս շահառուների ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքը (այսուհետ՝ Մշակված գործիքներ)՝ հաշվի առնելով չափահաս և անչափահաս շահառուների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները:

Բացի այդ, քննարկման արդյունքներով ՀՀ արդարադատության նախարարության կողմից որդեգրվել է Մշակված բոլոր գործիքները «մեկ պատուհան» սկզբունքով ներդնելու մոտեցումը՝ նպատակ ունենալով կրճատել վարչարարությունը և փաստաթղթաշրջանառությունը:

Հարկ է նշել, որ Մշակված բոլոր գործիքները զետեղվելու են e-probation էլեկտրոնային կառավարման համակարգի մեջ, որի ներդրման նպատակով 2021 թվականի նոյեմբերի 5-ին Եվրոպայի խորհրդի կողմից հայտարարվել էր



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

մրցույթ: Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են 2022 թվականի հունվար ամսին:
Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ e-probation էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկման արդյունքում միայն հնարավոր կլինի հասնել սույն ռազմավարական կետի ամբողջական իրականացմանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական)

Կատարված է

Կատարված է մեծ մասամբ

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ

Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 58

Ենթակետ 1. Մշակվել և իրականացվել են հասարակության շրջանում քրեական ենթամշակույթի նկատմամբ զրո հանդուրժողականության ապահովմանն ուղղված իրազեկման ծրագրեր:

Ենթակետ 2. Մշակվել և իրականացվել են իրազեկման ծրագրեր, որոնց հիման վրա անձինք (այդ թվում՝ դատապարտյալները և պրոբացիայի շահառուները) պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:

Ենթակետ 3. Մշակվել և իրականացվել են պատժից ազատվելուց հետո հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխմանը և հանդուրժողականության աստիճանի բարձրացմանն ուղղված իրազեկման ծրագրեր՝ հիմքում ունենալով դատապարտյալների վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Ենթակետ 4. Արդարադատության շղթայում ընդգրկված մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության և քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում վարվող պետական քաղաքականության գաղափարախոսության ամրապնդման նպատակով պարբերաբար կազմակերպվել են աշխատաժողովներ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության կողմից, այդ թվում՝ գործընկերներ կազմակերպությունների ներգրավմամբ, ձեռնարկվել են մի շարք քայլեր՝ ռազմավարական նշված կետի 4 ենթակետերի կատարումը 2021 թվականի մասով կատարելու նպատակով: Մասնավորապես.



«Արդարադատության նախարարություն»

- 1) Ռազմավարական նշված կետի 1-ին ենթակետի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.
- ա. Կազմակերպվել են քննարկումներ՝ միտված օրենսդրական փոփոխությունները կյանքի կոչելուն: Քննարկվել են օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական ենթամշակույթի նվազեցմանն ուղղված դրույթները, առկա խնդիրները և լուծումները:
- բ. «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից քրեական ենթամշակույթի դեմ պայքարի՝ զրո հանդուրժողականությանն ուղղված միջոցառումները հասարակության լայն շրջանակներին իրազեկելու նպատակով ծառայության պաշտոնական կայքէջի (www.penitentiary.am), ֆեյսբուքյան էջի և զանգվածային լրատվության միջոցներով հասարակությանը լուսաբանվել են քրեական ենթամշակույթի դեմ պայքարի և դրա գործիքակազմի մասին (շուրջ 5 հրապարակում), ինչպես նաև արգելված իրերի, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ ուղղված (շուրջ 65 հրապարակումներ՝ միջոցառումներ, խորհրդակցություններ և այլն): Լուսաբանվել են նաև «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում իրականացված բազմաբնույթ միջոցառումները:
- գ. Ռազմավարական նշված կետի շրջանակներից ըստ էության բխում է նաև «Եվրասիա համագործակցություն հիմնադրամ»-ի կողմից մշակված «Բռնության մշակույթը Հայաստանում» հետազոտությունների ժողովածուն:
- 2) Ռազմավարական նշված կետի 2-րդ ենթակետի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.
- ա. «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձինք պարբերաբար տեղեկացվում են նաև պետության կողմից քրեակատարողական հիմնարկներում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողություն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ, տրամադրվում են անհրաժեշտ խորհրդատվություններ, կազմակերպվում են անհատական ընդունելություններ՝ տարաբնույթ հարցերի, իրավական օգնության տրամադրման, ինչպես նաև հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից նեղ մասնագիտական խորհրդատվությունների վերաբերյալ, ինչն ընդգրկվում և իրականացվում է նույն ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների ամենօրյա գործունեության



«Արդարադատության նախարարություն»

շրջանակներում:

բ. Հիմնարկներում պարբերաբար թարմացվում և փակցվում են կալանավորված անձանց և դատապարտյալների հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկները:

3) Ռազմավարական նշված կետի 3-րդ ենթակետի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

ա. 2021 թվականի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվել են քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվող մի շարք քայլեր:

բ. Լրատվական ծրագրերի միջոցով լուսաբանվել է վերասոցիալականացման ծրագրերի շրջանակներում պրոբացիայի շահառուների աշխատանքի տեղավորման մասին:

գ. Հանրային իրազեկման բարձրացման նպատակով համագործակցելով Եվրոպայի խորհրդի հետ՝ ստեղծվել է Պրոբացիայի ծառայության գործունեության իրազեկման վերաբերյալ տեսահոլովակ, որի նպատակն է հասարակության լայն շրջանակում բարձրացնել Պրոբացիայի ծառայության դերն ու նշանակությունը: Բացի այդ, «Հելսինկյան Ասոցիացիա» իրավապաշտպան հասարակական կազմակերպության աջակցությամբ Պրոբացիայի գործունեության ոլորտին առնչվող իրազեկման տեսահոլովակներ են պատրաստվել:

դ. Համագործակցելով «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ՝ 2021 թվականի հունիսի 1-ից իրականացվում է «Մարդիկ ճաղերից այն կողմ. ամրապնդելով ազատազրկված անձանց և հասարակության միջև կապը» ծրագիրը, որի նպատակն է ստեղծել մեդիա հարթակ, որտեղ ներկայացվել են ազատազրկված անձանց հիմնախնդիրները հանրայնացնող տեսաֆիլմեր, ֆոտոպատմություններ և հոդվածներ: Ակնկալվում է, որ մեդիա հարթակը կօգնի բարձրացնել հասարակության իրազեկվածությունն անազատության մեջ գտնվող անձանց խնդիրների շուրջ, ինչն էլ հետագայում թույլ կտա բարելավելու հասարակության և ազատազրկված անձանց միջև հաղորդակցությունը՝ նպաստելով նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությանը: Նկարահանվել են «Մարդիկ՝ ճաղերից այն կողմ» խորագիրը կրող տեսաֆիլմեր, որոնց մասնակցություն են ունեցել ՀՀ ԱՆ «Աբովյան», «Արմավիր», «Սևան» «Հրազդան» և «Գորիս» ՔԿՀ-ներում պատիժ կրող 9 դատապարտյալ:

Նաև մեկնարկվել են «Նամակներ բանտից» հոդվածաշարը, որի շնորհիվ անազատության մեջ գտնվող անձանց հնարավորություն է տրվել բարձրաձայնել իրենց մտահոգությունների մասին, ներկայացնել անձնական



«Արդարադատության նախարարություն»

պատմությունները՝ ազատությունից զրկվելու բոլոր հետևանքներով, ինչպես նաև բանտային պայմաններին հարմարվելու դժվարությունները և այնտեղ անցկացված տարիների փորձառությունը: Ծրագրին մասնակցություն ունեցած բոլոր ազատագրված անձինք արժանացել են շնորհակալագրերի, իսկ հողված ներկայացրած անձանց տրամադրվել են նաև հոնորարներ:

4) Ռազմավարական նշված կետի 4-րդ ենթակետի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

ա. ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի հետ կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարական գաղափարախոսությունը կյանքի կոչող «Քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծին»: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկել են «Քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի առանցքային հարցերը, մասնավորապես՝ պատժի նպատակներին, պատժի կատարման սկզբունքներին, դատապարտյալների վերասոցիալականացմանը և դրա հիմնական միջոցներին, պատժի կատարման նկատմամբ դատական վերահսկողությանը, կարճաժամկետ ազատագրվածանը և պատժի կրման պայմաններին առնչվող մի շարք հարցեր:

բ. «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության համագործակցությամբ 2021 թվականի սեպտեմբեր ամսին «Մարզերում մեկնարկել է պրոբացիայի հիմնախնդիրների ու բարեփոխումների թեմայով աշխատաժողովների շարքը՝ նպատակ ունենալով բարձրացնել պետական մարմինների, այն է՝ դատական համակարգի, դատախազության, ոստիկանության մարզային վարչությունների ներկայացուցիչների, փաստաբանների և մարզերի համալսարանների իրավագիտության, սոցիոլոգիայի և հոգեբանական ֆակուլտետի ուսանողների իրազեկվածությունը Պրոբացիայի ծառայության մասին:

գ. 2021 թվականի հուլիսի 2-ին և հուլիսի 19-ին արդյունավետ համագործակցության մեխանիզմների ներդրման շրջանակներում «ԱՆ պրոբացիայի ծառայությունում տեղի են ունեցել համատեղ վերապատրաստման դասընթացներ: Նշված դասընթացների կազմակերպումը միտված է «ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև համագործակցության փիլիսոփայության ձևավորմանը:



**ՀՀ արդարադատության
նախարարություն**

ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների միջև համագործակցության ամրապնդման ուղղությամբ իրականացվող վերապատրաստման դասընթացները կրելու են շարունակական բնույթ: Ըստ այդմ, պարբերաբար իրականացվում է մոնիթորինգ՝ համապատասխան թեմաները թիրախավորելու և ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայողներին վերապատրաստելու:

դ. Պրոբացիայի ծառայության և մի շարք համալսարանների, այդ թվում՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի, Եվրասիա միջազգային համալսարանի, Որարտու համալսարանի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր, որի շրջանակում իրականացվում են Պրոբացիայի գործունեության ոլորտի իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ Պրոբացիայի ծառայողների կողմից համալսարանի ուսանողների համար դասախոսությունների անցկացում, ինչպես նաև նշված համալսարանների ուսանողների համար պրակտիկայի կազմակերպում պրոբացիայի ծառայությունում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2021 թվական)

ԿԱՏԱՐՎԱԾ Է

Կատարված է մեծ մասամբ

Կատարված է մասնակի

Կատարված չէ